

# ՇԱՌԹԻՄ

ԲԱԺԱՆՆԻ ԿԳՐՈՒԹԻՒՆ  
 Պոչկարիոյ համար  
 Տարեկան 12 Տր.  
 Վեցամսեայ 6 »  
 Արսասահմանի համար  
 Տարեկան 15 »  
 Վեցամսեայ 8 »  
 Ամերիկայի համար  
 Տարեկան 3 Տր.  
 Վեցամսեայ 1.50 »  
 ԿԱՆԻՅԻՎ ՎՃԱՐՆԵԼԻ  
 Իտալոգրամ սոյր առաջին  
 քրեսիկ համար 40 սակրիս  
 է . իսկ վերջին քրեսիկ համար  
 20 սակրիս է . Երկին  
 սեղի սեղաններու համար  
 20 Սոյ գեղը կըլլայ .  
 Վառնայի համար ձեռքի 10 սակրիս

Նամակ եւ դրամ դրկն  
 Խճրագրութեան հասցիին  
 —  
 Редакция на вестникъ  
 «Шаржумъ»  
 Варна  
 Redaction du journal  
 «Charjourn»  
 Varna (Bulgarie)  
 —  
 Իրոքիսիս եւ յեն սրուիս  
 Արսասահմանի ձեռքի  
 )( 20 ՍԱՆԹԻՄ )(  
 Պոչկարիոյ համար ձեռքի  
 )( 15 ՍԱՆԹԻՄ )(

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ . ԲԱՂԱԲԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ  
 ԿԸ ՀՐԱՅԱՐԱՎՈՒԹԻ ԶՈՐԵՔԵԱՐԹԻ ԵՒ ՇԱՐՄԹ ՕՐԵՐԸ

## ՊԵՏԲ Է ՏՕՆԵԼ

Յիլիպէյուժ գաշնակցականները արդէն տօնել են Հ. Յ. Դաշնակցութեան տասնամեակը . անշուշտ Բուլղարիայի բոլոր քաղաքներում էլ , ուր գաշնակցականներ կան , այդ տօնը կը կատարեն :

Ճիշդ է հայ յեղափոխութիւնը դեռ իր վերջնական նպատակին չէ հասել , հայ ժողովուրդը դեռ գերի է , հայրենիքը շղթայակապ և աւերակ , հազարաւոր նահատակների աւերակները չեն ցամաքել , անթիւ սգաւոր մայրեր , քոյրեր և հարսներ դեռ իրենց սեւերը չեն փոխել հայրենիքի փրկութիւնով ուրախացած , բայց և այնպէս պէտք է տօնել :

Պէտք է տօնել սուգ և ուրախութիւն իրար խառնած , որովհետեւ հայութիւնը թէ սգաւոր և թէ ուրախ է . սգաւոր իր տաճ զոհերի համար , ուրախ որ ձեռք չէ քաշել իր վարդազոյն յոսերից և հաստատ որոշումը ունի շարունակել կռիւը և իր այդ յոյսերը իրականացնել :

Պէտք է տօնել , որովհետեւ ազատութեան համար մղված մարտի մէջ լիովին սուգ չըկայ . այնտեղ սուգ և ուրախութիւն իրար խառն են , զուգորտված . սուգը կորստի համար , ուրախութիւնը ազատութեան գաղափարի յառաջ խաղացման :

Մենք միայն սգում էինք այն ժամանակ , երբ անխօս և հլու ստորուկ էինք . այսօր մենք լուռ և հնազանդ ստորուկ չենք , այլ անհնազանդ ապստամբներ բռնութեան դէմ . ուրեմն տօնենք , ու մեզ այդպէս զարձնող ընկած հերոսների քաջութիւնը , անձնազոհութիւնը և անմահ յիշատակները փառարանենք :

Տօնենք և մի քանի ժամվայ ընթացքում ետադարձ ակնարկ նետենք մեր ընտրած ճանապարհի այն մասի վրա որ կրտսերները սրտ տաս տարվայ ընթացքում , լացով և ուրախութեամբ , ու անսնենք թէ որչափ

ենք մօտեցել մեր կէտ նպատակին :

Տօնենք որ մեր ժողովուրդին ցոյց տանք թէ իրենց գործի յաջողութեանը հաւատացողները գիտեն պատերազմից առաջացած սուղերի անխուսափելի ձայնին խառնել և մարտական գոռ ուրախութիւնը :

ՎԱՐԳՑ

## ՀԱՅ. ՅԵՂ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ ՏԱՍՆԱԿՑՆԵԱԿԻ ԱՌԹԻԻ

Հրճուանքով կուգամ արձանագրել «Շարժում» մէջ ապրիլ 8 կիրակի օր Դաշնակցութեան տասնամեակի աւերակով տեղի ունեցած հանդէսը : Մեզի համար միթիթարակունը և ուրախորտայն չէ որ հանդէսը սպասուածէն շատ շքեղ եղաւ և առաջինը մինչեւ հիմա եղածներուն մէջ , այլ ան՝ որ 900 հոգիէ բաղկացած պատկառելի բազմութիւն մը վաւթացած էր իր յարգանքը նուիրել Դաշնակցութեան , կայնելու տեղ իսկ չի գտնելով խումբ խումբ ետ դարձողներն ալ զատ : Ժողովուրդին ցոյց տուած այս համակրանքը նշան է թէ Դաշնակցութիւնն է միակը ժողովուրդին ցաւերուն վրայ մտածող , ան կայ ու պիտի մնայ իր բարձրութեան մէջ անարատ պահելով իր վարկն ու ազդեցութիւնը , պապանձեցնելու աստիճան ալ արհամարհող դէպի իր դէմ կազկանձողները :

Հանդէսին վրայ խօսելէ առաջ , պարտք կը զգամ յիշել որ առտուն եկեղեցւոյ մէջ հոգեհանգիստի պաշտօն կատարուեցաւ ընդհանուր հայ նահատակներու համար , ուր նմանը շատ քիչ անգամ տեսնուած բազմութիւն մը ներկայ էր : Մակեդոնական կոմիտէի և «Իէլիչէ» քօ տրումէսթիօնի անդամները փութացած էին , նոյնիսկ շատ մը հայերէ առաջ , յարգել մեր նահատակներու յիշատակը : Աւելի գոհ սրտով պիտի հեռանայինք եկեղեցիէն եթէ մեր վարդապետը չըսէր իր ձանձրացուցիչ և «պօշ» քարոզը ուր առաջին բառը «մուրացկանու-

թիւն» էր , որով իր մաքին խեղճութիւնը երեւան հանեց այնքան բազմութեան մէջ , հայ հարուստ բարերարները և քանի մը բարձրաստիճան կղերներ նահատակ կլլեցնել ուզեց մեզի հայրենիքի սուրբ զոհերուն տեղ :

Գոնէ լուր ալ խեղճ մարդը : Հանդէսը քաղաքիս «Յար Սիմէօն» թատրոնի ընդարձակ սրահին մէջ տեղի ունենալը կարգացոյցով մը ծանուցուեցաւ ժողովուրդին :

Բեմին երկու կողմերը Հայ Յեղ. նահատակներու , Մայր Հայաստանի և Հայկական զինանշանի պատկերներով զարդարուած էր , որոնց վրայ Հայկական եռագոյն դրոշակը ձգուած էր :

Ժամը 9ին հանդէսը բացուեցաւ «Բամբ Որոտան» խմբերգով զոր երգեց հայ երգեցիկ խումբը խորխարար , ուրկէ անմիջապէս ետքը Օր. Զարուհի Դաւթեան «Դրօշակ» մէջ հրատարակուած «Դէպ ի երկիր» առաջնորդը կարգաց՝ գրուածքին յարմար տխուր շեշտով և ամէն բառ գիտակցաբար արտասանելով որ շատ գոհ թողուց հանդիսականները :

Անկից վերջ պուլկար երգեցիկ խումբը երգեց խիստ ներդաշնակ , և հանդիսականներու ծափահարութիւններուն պատճառով կրկնեց ուրիշ մըն ալ : Յետոյ արտասանուեցաւ Օր. Արմենուհի Տ. Եանի կողմէ Գամառ-Քաթիպաի «Հայերիս թուրք» ազգու շեշտով մը , Պ. Անդրէաս Յակոբեան պուլկարերէն ստանաւ որ մը արտասանեց «Շառլ լեռան վրայէն սկսեալ մը Մակեդոնական վիճակին վրայ» : Բեմ բարձրացաւ Օր. Վ. Շահնազարեանց և երգեց Գամառ-Քաթիպայի «Արի իմ ստիակը» , որուն գաշնակով կրկնեց քանար Տիկին Բեբրոնէ Թամիրեանց : Օրիորդը՝ իր հրապուրիչ ու անուշ ձայնին վարժ թրթումով ներովը հիացուց ներկաները՝ որոնք ուժգին ծափահարութիւններով ուրիշ մըն ալ խնդրեցին և որոնց փափագին գոհացում տուաւ Օրիորդը՝ երգելով Մարտ Շահազիզեանցի «Ես յսեցի մի առաջ ձայնը» , նոյնքան աղուոր

կերպով : Այս երգին arrenenantը Տիկին Բեբրոնէ Թամիրեանց ըրած էր շատ յաջող կերպով :

Ատնցմէ յետոյ պատիւը ունեցանք բեմին վրայ տեսնալու օրուան բանախօսը՝ Պ. Ք. , գաշնակցական կարեւոր դէմքերէն մէկը : Իր ազգու ձայնը , խօսելու ընդունակութիւնը , ունեցած վստահազարներն ու լայն մտքերը մագնիսացուցին ունկընդիրները : Ան՝ հանդէսին նպատակը բացատրելէ յետոյ , անցաւ իր նիւթին , որ պատմական զօրաւոր փաստերու վրայ հիմնուած շատ լուրջ և բազմակողմանի ուսումնասիրութիւն մըն էր մեր վիճակին , մեր հին գաղութներուն մեր յեղափոխական կեանքին , մեր ըրածին ու ընելիքին վրայ : Յարգելի բանախօսին խօսածները միշտ խոհուն , միշտ ազգու և լուրջ , կը պարունակէին գաղափար և սիրտ : Անընդհատ բռուն ծափահարութիւններ թնդացուցին սրահը :

Ընդհատուած մը վերջը նորէն պուլկար երգեցիկ խումբը երգեց : Յետոյ բեմ բարձրացաւ պուլկար տիպար հայրենասէր մը Պ. Կրճիկով : Յարգելի աստեղանին մեր մասին ունեցած մտածումներն ու գաղափարները երկու տողով ջանամ ուրազ ծել պարզելով մեր պատմական անցեալը , մեր յեղափոխական , մասնաւորապէս Դաշնակցութեան գործունէութիւնը , յարգելի ատենաբանը ընդարձակ պատմութիւնը բրաւ կուկուրեանի արշաւանքին , Յօսի , Զաթօի , Ժիրայրի կեանքին , և այսպէս կարգաւ պատմելով եկաւ հասաւ մինչեւ պանքաի կռիւը , անոր ճշմարիտ հերոս Բարկէնը՝ նոյնիսկ ցոյց տալով պատին վրայ անոր պատկերը մատնանիչ ըրաւ անոր քաջութիւնը , և անկից յետոյ մինչեւ մեր օրը : Իր խօսելու լաւ ընդունակութեան միացուցած էր լուրջ ուսումնասիրութիւն : Բազապատմութեան դրաւ մեր յեղափոխութիւնը իր աննպատակ միջավայրով ու պարագաներովը , Մակեդոնական և ուրիշ յեղափոխութիւններու հետ , ըսաւ որ հայ

ազգին տուած զոհերուն պէս բարձր ու վեհ զոհեր և ոչ մէկ ազգ չէ ունեցած, և ան իւր ազգ իրաւունք ունի պատեցու: Օր. Նուարդ Չեքտիրեան «Իրօշակ»-ի մէջ ի «Աշուղի երգը» արտասանեց, ձեռքը բռնած ջութակ մը որուն վրայ պեանդուած էր անմահ Պետոսի պատկերը, և վերջացուց իր ոտանաւորը ծափեր խելով: Տիկին Քեքտիրեանի գաշնակի վրայ նուազեց հմուտ կերպով գծուած կտոր մը «Hirondelle perdue»-ն և ունկրեց իրենքը հիացուց: Իսկ ամէն արտասանութիւններէ վերջ՝ հայկական երգչիկ խումբը միշտ քառաձայն երգեր երգեց պէսպիսութիւն մը տալով հանդիսին: Քառորդ ժամու գազարէ մը յետոյ ներկայացուեցաւ երկր կենդանի պատկերներ:

Կենդանի պատկերներուն առաջինը կը ներկայացնէր գաղթականութեան դիմող հայերու խումբ մը խառն տղամարդերով օրիորդներով ու մանուկներով, և այս միջոցին թուրք հարկահաւաքիչին և իրեններուն անոնց վրայ բանեցուցած անլուր և անխիղճ ճնշումներն ու սպառնալիքները:

Երկրորդը կը ներկայացնէր թուրք զօրքերուն և խուժանին մէկ յարձակումը հայ գիւղի մը վրայ, ուր յեղ. հրոսակախմբի մը երեւումը սիրտ տուած է գիւղացիներուն որոնք կը կռուէին քաջաբար: Ուշագրաւ էր հայ կնոջ մը, — Օր. Պարտիզեան — զաւակները չորս կողմը առած դէպի ֆէտայիները ապաստանելու ճիգը խիստ բնական և արտայայտիչ ձեւով մը:

Երրորդին մէջ կը պատկերանար յեղ. զօրքերուն և խուժանին մէկ յարձակումը հայ գիւղի մը վրայ, ուր յեղ. հրոսակախմբի մը երեւումը սիրտ տուած է գիւղացիներուն որոնք կը կռուէին քաջաբար: Ուշագրաւ էր հայ կնոջ մը, — Օր. Պարտիզեան — զաւակները չորս կողմը առած դէպի ֆէտայիները ապաստանելու ճիգը խիստ բնական և արտայայտիչ ձեւով մը:

նար յեղափոխականներու և թուրք զօրքերու անհաւասար կռիւ մը ուր՝ մասնակցած էին օրիորդներ և կիներ, և յեղ. կարմիր դրօշը պարզած էր Օր. Պերճուհի: Կուռ տղամարդոց, մասնաւորապէս կիներու բարկացալտ արհամարհանքը դէպի ինկած թուրք զիակաները և վրէժխնդրութեամբ լեցուած կոխկռուքները՝ բացայայտօրէն ցոյց կուտար թէ՛ կոխը յաղթական էր հայերու կողմանէ: Կուռ տաք միջոցին թանձր ամպերու ստուերին մէջէն հրեշտակի մը — իրօք հրեշտակի պէս 7 տարեկան սիրունիկ օրիորդ մը — իջնելը լաւ նշան մը ցոյց կուտար: Ամէն մէկ վարագոյրի բուն ծափերով կրկին բացուիլը պահանջեց ժողովուրդը: Ազգաւորութեան չափ չիկար:

Հինգ օրիորդներ — Սրապեան Սաթեմիք և Պերճուհի Պարտիզեան, Սվաճեան և Օր. Նուարդ, Ա — ամենայն սիրով մասնակցած էին կենդանի պատկերներուն, լաւ ապացոյց մը տալով իրենց գաղափարական և մտային մակարդակին վրայ:

Ժամը 1 1/2 էր երբ ժողովուրդը, ամբողջ 5—6 ժամ սպասելէ յետոյ, մեկնեցաւ սրահէն յուղիչ տպաւորութիւնով մը հայրենիքի սիրով լցուած:

### ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՄԱՍՈՒԼ ԻՐԵՆՔ ԿԸ ՀԱՍՏԱՏԵՆ ՀԻՄԱ

Գ. Զուպանեանի գրածներէն մինչեւ հիմա մեր ամփոփածները գրեթէ Արփիարեանի անձին հետ կապ ունեցող գլխաւոր կտորներն էին, որոնք ամէն ինչ պարզ կերպով ցոյց կուտան

մեզի: Ասկից վերջը կը սկսի գլխաւորը. կեդրոն—Արփիարին եւ իր հակայեղափոխական կուսակցութեան քայքայման ու ապականութեան պատմութիւնը: Ուրեմն կրկին մտիկ ընենք Պ. Զուպանեանին:

«Այդ «ժամանց»-ի սիրահար մտքին (Արփիարի) համար, յեղափոխութիւնը եւ գրեթէ թէ ամէն բան ժամանց մը (էյլենճէ) եղած է ամէն բանէ առաջ (\*): Եստ յաճախ տեսած եմ զինքը Ռարիզ, Հնչակեան (Արփիարեան ըսել կուզէ) կազմակերպութեան օտար եզրող անձերու առջեւ երկար օրէն պարզել իր կեդրոնին ներքին կացութիւնը, միամտօրէն գանգատել որ ԴՐԱՄ Չեն ՂՐԿԵՐ ԿԵՆՐՈՒՆ, իր ընկերները ծաղրել, իր ծրագրիները մէջտեղ փռել, կատակարարութիւններով չըջանկուած նկարագրի տկարութիւններ սրտնք ֆալսիտն կը շեշտեն, Մաքիալիւն բաժինը իր մէջ մանրագիտական զարձնելով»:

«Իր ծրագրիները... հարիւրաւոր են անոնց. ամէն անգամ իրեն հանդիպելու, ճանկակներով ծրագրի ներկայացուցած է ինձի: Հատ մը չեմ յիշեր սակայն զոր անականօրէն ձեռք առած եւ իր մտքին, կամ քերթին, խանդին բոլոր ուժերով յամոռէն ու հաստատութեան մինչեւ ծայրը իրագործած ըլլայ: Իր ծրագրիները ցնդած են միշտ՝ անկենսական արգելիքն առջեւ: Մէկ հատ միայն իր ծրագրիներէն թերեւս միակը որուն անկեղծօրէն համոզուած ու յարած էր, թերք մը հանկուտ ջրագործ, այս մեղեքներն յղացուցին շարքին մէջ բացառութիւն կազմած է: Թերթ մը ունենալու մարմալը Եւրոպա գալէն ի վեր Արփիարեանի հրայրքն էր. եւ այդ իզը գլխաւոր քաղաքս իւրաքանչիւր ձգտումներուն գոհացում առաւ մղումէն կը թղթէր քան թերքով մը «գործ սեւեւելու» ցանկութեանէն: Իր սենյանքն էր օրկան մը ունենալ, ամէն բանէ աւելի իր

(\*) Որովհետեւ յեղափոխական չէ երբեք եւ յեղափոխութիւնը ըրած չունի հակայեղափոխականութենէ զատ:

Գ. Զուպանեանի գրածներէն մինչեւ հիմա մեր ամփոփածները գրեթէ Արփիարեանի անձին հետ կապ ունեցող գլխաւոր կտորներն էին, որոնք ամէն ինչ պարզ կերպով ցոյց կուտան

նին յիշատակներուն տուրուակը անոր մէջ պարպելու եւ իրեն անխառն եղող մարդիկը կանչու համար. «Չեն գիտեր. կը գրէր ինձի անգամ մը Լոնտոնէն՝ Նոր Կեանքին հիմնադրութեան, չեմ գիտեր «ժամանց»-ի ո՛ր չափ ներթեր զիտուած են քովս՝ Եւրոպա գալէս ի վեր. ի՛նչ ցաւալի բան է որ թերթ մը չունիմ»:

«Թերթի այս կարօտն էր որ Արփիարեանը մղեց մեղաբարեկամութեամբ անցընելու այն նազարեկին հետ, որուն արդէն կասկած ներշնչող վարձուքներուն մասին քննութիւն մը կատարելու պաշտօնով Պոլսոյ Հնչակեանները զինքը Լոնտոն զրկած էին: Փոխանակ քննութիւն կատարելու Արփիարեան, զոր նազարեկէ պաշտօնից ամէն տեսակ փաղաքշտութեանով անթերի գտաւ եւ մեզի այդպէս ներկայացուց այդ «Կեդրոն»-ը, որովհետեւ այնտեղ իրեն կը բացուէին Հնչակի սրահները ուր պիտի կարենար իր «ժամանց»-ի ծրագրը յագեցնել եւ ուր իր առաջին գրածը Արփիարեան փայտին վրայ «ժամանց» մը եղաւ: Մեղաբարեկամութեամբ ցաւ Արփիարեան արտաբանութեամբ»:

«... Կերակարգման Հնչակեան կուսակցութեան մէջ, Արփիարեան, որ ընդունեցաւ Քեքտիրեանի վերջին պաշտօնը (\*) ոչ ինչ զրաւ եւ միեւնոյն այսօր որ «գործ» կարենայ կողուիլ»:

«... Արփիարեան ու կեդրոնը, որ նազարեկին կեդրոնը իւրացուցին, պարտաւոր էին ոչ միայն պահանջ այդ ուժը, այլեւ՝ իրենց գերազանցութիւնն ապացուցանելու համար՝ զայն «գործածելու» աւելի ու չիմ եղանակով մը: Արդ, Արփիարեանի կեդրոնը ոչ միայն ոչինչ կըրցաւ ընել այդ ապացոյցը տալու համար, այլ եւ նոյնիսկ անկարող ե...

(\*) Եւ դեռ ամիս մը առաջ Արփիարեան հրապարակաւ կը ստէր քովով թէ՛ ինք պարզ խորագրի մը է, ան ալ տարիէ մը ի վեր, և և միշտ կը կրկնէ ալ թէ իր թերթներուն մէջ գրուածները կեդրոնին անդամներուն համաձայնութեամբ կը ըլլայ |:

### ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

### ԱՐԴԻ ԵՒ ԳԱԼԻՔ ՕՐԵՐԻՑ

(Ք Ա Ղ Ա Ք Ա Կ Ա Ն ԽՈՐՀՐԳԱԾՈՒԹԻՒՆՆԵՐ)

Իւ՛ն շատ սիրելի «Կարին» ֆեկ եւ՛ Լեւիտու՛ւտ առաջին ֆաղափակն յօդուած դասախօսութիւնս, որովհետեւ ոչ ոք այնքան չի ազդել իմ ֆաղափակն զգացողութեան վրա, որքան դու:

II Անցնում եմ կովկասեան հայութեան:

Կովկասահայերի կացութիւնը կականապէս տարբերում է թիւրքահայերի կացութիւնից: Ռուս կառավարութիւնը, չը նայած իր հասանալիցութեան, արդեւ չի հանդիսանում անտեսական ձեւերի ազատ զարգացման: Ամբողջ Ռուսիան եւ անոր

հետ Անտրկովկասը ամենայն արագութեամբ անցնում են կապիտալիստական արդիւնարեութեան ձեւին նախորդող բոլոր շրջանները եւ մեր աչքի առջեւ աւելի կարճ ժամանակամիջոցում կատարուում է տնտեսական յեղաշրջման այն մեծ գրաման, որը Եւրոպայում տեղի է ունեցել ամբողջ 18րդ եւ անցեալ տարի առաջին կիսի ընթացքում, Ռուսաստանի եւ Անդրկովկասի տակին դասակարգային կազմը տակն ու վրա է լինում եւ երեւան են գալիս նոր, մինչեւ այժմ անձանթ տարրեր: Արդիւնարեական կեանքի ծանրութեան կենտրոնը սակաւ գիւղերից փոխուում է դէպի քաղաքը, գիւղացիական եւ կալուածատերական նահապետական տնտեսութիւնից դէպի գործարանական նորագոյն տնտեսութիւնը: Այս փոփոխման բնականաբար ընկերակցում է մի ուրիշը, այն որ գիւղատնտեսական բնակչութեան «հարկային ընդունակութիւնը» իջնում է օր օրի վրայ, իսկ քաղաքային գործարանական բնակչութեանը աճում: Ռուս կառավարութիւնը, որը իր հպատակների վերաբերմամբ մի հայեցակէտ միայն

ունի՝ հարկային հայեցակէտը, գիտակցեց չուսով այդ զարգացման կարեւորութիւնը եւ փութաց երկրի տնտեսական յեղաշրջումը իր հովանաւորութեան տակ առնելու, իւրացնելով տարեց տարի երկրի երկաթուղային ցանցը, նոր շուկաներ ձեռք բերելով, մասնագիտական միջին եւ բարձրագոյն գաղութներ հիմնելով, ռուսական ապրանքների արտօնութիւնը դիւրացնելով եւ օտար ապրանքների ներմուծումը դժարացնելով եւ առհասարակ իր ամբողջ տնտեսական քաղաքականութեամբ:

Թող աւելք ինձ ընդհանուր գծերով ուրեւաբարու այստեղ կովկասահայ ժողովուրդի սօցիալ-տնտեսական կացութիւնը արդի փոխանցական շրջանի մէջ: Այդ կացութեան ամենից բնորոշ կողմը արհեստաւոր դասակարգի գրուածութիւնն է: Համարական կազմակերպութիւնը կորցրել է իր վաղեմի նշանակութիւնը իր մի գլուղապետարգային հիմնարկութիւն, որը կանոնաւորում էր արդիւնարեութիւնը եւ որոշում արդիւնարեութեան պայմանները, մեղմում էր ներքին մրցումը եւ արհեստաւոր

դասի շահերի եւ իրաւունքները պաշտպանելու էր հանդիսանում: Մնացել են ձեւականութիւններն ու խորհրդանշանները միայն: Չքացել է եւ միջին արհեստաւորի տիպը եւ և դեռ կէս դար առաջ համարեայ թէ համանման դասերի մէջ առաջ են եկել երկու՝ իրենց գրութեամբ միանգամայն տարբեր արդիւնարեական խումբեր, որոնց միջեւ գրութեանը անջրպետը օր օրի վրա աւելի եւ աւելի անասանելի է դառնում: Առաջին խումբին պատկանում են այն փոքրիկ գրամագլխի տէր վարպետները, որոնք իրենց արհեստանոցներում մի քանի կամ շատ աշակերտներ են բանեցնում: Հնչի մասնակցութիւն են ընդունում կամ ընաւ չեն մասնակցում անմիջական արդիւնարեութեան մէջ եւ միայն հսկում են ու կանոնաւորում աշակերտների աշխատանքը: Այս վարպետանոցների մէջ յայտնի չափով մտքուած է աշխատանքի բաժանումը եւ աշակերտները որոշ վարձ են ստանում: Վարպետ արհեստաւորի եւ աշակերտ արհեստաւորի յարաբերութիւնը չունի վաղեմի սերտութիւնը եւ մտանում է գործարանա-

դաւ այգ արդէն կազմուած ուժը նոյն  
նութեամբ պահպանուի : Նոր կեդ-  
րոնին կազմուածքը կը բաւէր զինքը  
յաւերթական անշարժութեան դատա-  
պարտելու համար : Կեդրոնը կը կազ-  
մուէր (մտիկ ըրէք) հինգ անձերէ ու  
դրանցիկ խորհրդակցութեան հիմն  
վաստիքն ձեռքով մէջ կը բնակի : Եւ  
գործ մը որոշելու համար այդ անձերը  
չորս ամիս թղթակցութեան պարտա-  
ւոր էին եւ կրնայ յաճախ—ինչ որ թե-  
րեւս աւելի ճախորդ միջոց մըն էր—  
գործին վարումը ամբողջ իրենց կոն-  
տրոլի ընկերով յանձնելու :  
«Արփիարեանի կեդրոնը մեծա-  
զորոգ խոստումներ քրաւ նոր ուղ-  
ղութիւն մը սկսելու : ազգին բոլոր  
հատուածները միեւնոյն դրօշին ներ-  
քեւ միացնելու ! : զիւանդիտական  
գործունէութեան մը ձեռնարկելու !  
հայերը եւրոպային ճանչցնելու գործը  
ընդարձակօրէն ու զօրեղօրէն վարե-  
լու ! : Այս խոստումներէն եւ ոչ մէկը  
կրցաւ կատարել (\*\*) . . . : Վաստաւ-  
աւարտ : Լոնտոնի մէջ Արփիարեանի  
կեդրոնի զոյնքիւնիս իսկ անձանքը հ  
անկուտ :  
« . . . : Արփիարեանի կեդրոնին  
միակ գործը եղաւ «Նոր Կեանք»-ի եւ  
«Մարտի» հրատարակումը , այսինքն  
Արփիարեանի անձնական գիտաւոր  
բաղձանքին իրականացումը : Արդ .  
նոյնիսկ երկու թիւթերուն հրատա-  
րակման գործին մէջ , Արփիարեանի  
կեդրոնը չէ բռնած խոստումը գոր  
ազգին տուաւ :  
« . . . : Վերակազմուելու Հնչակեան  
կուսակցութեան որկանէն «գրական»  
գործունէութիւն մը չէ որ կը սպասէր  
ազգը . «գործ» կը սպասէր» . . . : Չուտ  
յեղափոխական տեսակէտով : Նոր  
Կեանքն ու Մարտը անխնայ հրատա-  
րակութեան մը ձեւացուցած են , ս-  
ւելի ժխտական քան հաստատու-  
կան . . . : Չեմ ծանրանար այն ծի-  
ծաղելիութեան վրայ որ յառաջ եկած  
է յեղափոխական սպազայ գարնանի  
պատրաստութիւններու մեծողորմ  
ուժը :  
(\*\*) Ի հարկէ բացի յեղափոխական  
գիտակին սակ' հակայեղափոխական  
ուղղութեան մը հետեւելէն :  
Գ .

նուցումներն որոնց երբեք ԳՈՐԾ մը  
չէ եկած իրականութիւնը հաստատ  
նոր Կեանքը մեծ թերութիւնն ալ  
ուրեցած է անագին աղ մը տալու  
երգիծանքին : յեղափոխական օրկան  
մը պէտք է ամէն բանէ առաջ ժողո-  
վուրդին խանդն ու հաւատքը բոր-  
բոքելու ջանայ :  
Այս առթիւ Չոպանեան կաւելցնէ  
թէ նոր Կեանք իր մէկ աշխատակ-  
ցին—«Նոր»-ի—տաղանդէն օգտուե-  
լով անոր գրած երգիծանքները , յե-  
ղափոխութիւնը ծագող կտորները  
սիրով հիւրընկալած է իր էջերուն  
մէջ , զանոնք Գաղափարութեան դէմ  
զէնք ընելու համար , այն ինչ Նոր  
առ ծագրանկարները գրած ատեն  
ոչ է կուսակցական նկատում չէ  
ուրեցած : Ենթադրելով որ ատ այդ-  
պէս ըլլայ , քանի որ Նոր գիտէր  
Արփիարեան չարամտութիւնը եւ կը  
սիրէր յեղափոխութիւնը , ինչու  
թոյլադրեց որ իր գայթակղարից  
գրուածքները հրատարակուի նոր  
Կեանքին մէջ , կը հասկնանք , Պ . Չո-  
պանեան այս վրան բաց պաշտպա-  
նողական յորինած է անոր համար  
որ , այսօր Նոր Նոր Կեանքը ձգելով  
իրեն հետ միացած է :  
(Շարունակելի)

### ՀԱՆԵՆՈՒԿԸ ԼՈՒՍՎԱՍԾ

Վերջապէս , մամուլի տակ սեղ-  
մված , Պ . Կրօն Միքայէլեան իր  
սեփական գրչով խոստովանեց  
Օգէսայի հանգանակութիւնը ,  
բայց խոհեմաբար լռեց հանգա-  
նակութեան ձեւի մասին :  
«Որքերու անունով չէ» յայ-  
տարարում է պարտը , որքերի  
կամ թէ աղքատ գաղթականներ  
ղաւակներ — կարծես դրանով  
այդ քայլը կարելի է արդարա-  
ցնել :  
Մենք սկզբունքով դէմ չենք  
որ մասնաւոր գաղթները համա-  
կրողների օժանդակութիւնը վա-  
յելին , միայն պէտք է որ նախ

րատուները լիովին գիտակից  
լինեն թէ ինչ գործի համար են  
նախաձեռնում :

Այդպէս էլ վարվել ենք Միքա-  
յէլեանի հայկական կրթարանի  
վերաբերմամբ , երբ Վարնայում  
ներկայացուցաներ են սարսիկ ի  
նպատակ այդ հիմնարկութեան ,  
որովհետեւ քողարկված կերպով  
նէր սուղները՝ տոմսակ գնող-  
ները քաջ գիտէին թէ ինչ գոր-  
ծի են նպաստում :

Իսկ Օգէսայի մէջ արգեօ՞ք Պ .  
Կրօն Միքայէլեանի պատուիրակը  
բացատրեց իր գաղտնի բոլորո-  
վին մասնաւոր եւ անձնական լի-  
նելը . եթէ այդպէս լինէր ան-  
չույա՞ Պ . Միքայէլեան հարկ չը  
պէտք է ունենար գաղտնագողի  
կատարել հանգանակութիւնը , և  
ոչ միայն ծածկել , այլ և հասա-  
րակութեան ստել թէ իր պատ-  
ուիրակը Պոլսի է գնացել , Հաս-  
տատ աղբիւրից գիտենք որ Օգէ-  
սայի նուիրատուները իրենց լու-  
մաները նախքան հայկական  
կրթարանին , համոզված լինելով  
որ այնտեղ գաստարակվում են  
30ի չափ հայ որբեր և աղքատ  
մանուկներ , որը բոլորովին սուտ  
է , եթէ այսպէս չը լինէր Պ . Մի-  
քայէլեանը անշուշտ մինչեւ հի-  
մա շտապած կը լինէր իր պաշ-  
տոնական յանձնարարականները  
հասարակութեան ներկայացնել ,  
այս մեղադրանքից ազատվելու  
համար :

Ահա այս «պղտոր» հանգանա-  
կութեան իրողութիւնն է ամօ-  
թալին որ չի կարող արդարա-  
նայ ոչ «ուսմանափակ» շըր-  
ջանով և ոչ էլ «աննշան» ար-  
գիւնքով : (Ըստ երեւոյթին 300  
բուպլին քիչ է եկել ձեռնարկողի  
համար) :

Իսկ ինչ վերաբերում է Հայկա-  
կան կրթարանի ուսուցչական  
խմբին՝ մենք շնորհատուրում ենք  
նրանց լռելեայն համերաշխու-  
թիւնը իրենց սնորէնի հետ այս  
«գովելի» ! արարքի մէջ :

### ԳԵՐՈՒՍԱՆ ԳԱՆՏԱՆՈՒՆԸ ԹԻՖԼԻՉԻ ՄԷՋ

Անշուշտ մեր ընթերցողները  
կը յիշեն թէ՛ Բարիզեան կարգ  
մը քննադատներ ինչ խիստ լե-  
զու գործածեցին այդ երիտա-  
սարգ տաղանդին դէմ : Կովկասի  
մէջ «Մշակ» անգամ զայն ան-  
ուանարկող յօդուածներ տպա-  
գրեց , դերասանի թշնամիներու  
ծուղակը լինալով :

Այսօր «Մշակ»-ի կարեւոր աշ-  
խատակիցներէն մին , իր աշ-  
քովը Գալֆայեանի խաղը տես-  
նելէն յետոյ՝ հետեւեալ տողերը  
կը գրէ տաղանդաւոր երիտա-  
սարգի մասին .

«Ուրբաթ , ապրիլ 6ին , արտիս-  
տական ընկերութեան ջրատար  
ծայրէ ի ծայր լիքն էր հայ հա-  
սարակութեամբ :

Երիտասարդ Գալֆայեան որին  
կանխել էին ամենահակասա-  
կան լուրեր , խաղալու էր առա-  
ջին անգամ բեմի վրա և խա-  
ղալու էր Շեքսպիրի «Համլետը»  
որի ծանրութիւնը շատ քիչ ու-  
սեր են կարողանում տանել՝ նոյն-  
իսկ շատ տաղանդաւոր և շատ  
փորձված դերասաններից :

Հասկանալի է , որ հասարա-  
կութիւնը սպասում էր ներկա-  
յացման մեծ անհամբերութեամբ ,  
սրտատրոփ :

«Լինել թէ չը լինել» պէտք  
է վճռվէր այդ երեկոյ բեմի  
վրայ ոչ միայն խեղճ դանիական

տիրոջ ու գործարանական բանուորի  
յարաբերութեան : Մէկը միւսի հետ  
միացնող կամուրջները վերջնապէս  
վերելու վրա են եւ արհեստաւորա-  
կան բանուորների ճնշող մեծամաս-  
նութիւնը դատապարտուած է կեանքն  
ի բուն բանուոր մնալու : Երկրորդ  
տիպի արհեստաւորները՝ խոնաւ եւ  
մութ կրպակներում կանուխ առաւօ-  
տից մինչեւ կէս գիշեր բանող մարդ-  
մեքենաներն են , տաճան աշխատան-  
քի այն մարտիրոսները , որոնց բան-  
ւորական օրը 15 — 16 ժամ է տե-  
ւում , իսկ վաստակը մի ընտանիք  
կէս սոված կէս կուս ապրեցնելու  
չափիցն էլ վար է : Այս կրպակների  
մէջ մուտք չէ գործել աշխատանքի  
բաժանումը , որովհետեւ աշխատանքը  
բաժնելու համար պէտք է նախ եւ  
առաջ բաւականաչափ աշխատուող  
ձեռներ ունենալ , մինչդեռ վերջին  
տիպի արհեստաւորը իր եւ չքաւոր  
հարեանի կամ ազգականի անչափա-  
հաս որդու մարմինը մաշելու եւ  
միտքը բթացնելու կարողութիւնն  
ուրի :

Պատկերական արհեստի վերջին «մօ-  
հականներն» են սրանք , փարշում են  
զեռ մի կերպ իրենց գոյութիւնը ,

իսկ որդիները չին դիմանալ այլեւս  
խոշոր վարպետանոցների եւ գործա-  
րանների անողորմ քրտնմոխն եւ կուշտ  
վարձկանութիւնը : անօթի անկա-  
խութիւնից զերազատելով , կը թող-  
նեն հայրերի արհեստը ու կերթան  
հայ նորափթիթի ինքուստարիտի տրա-  
մադրութեան տակ գնելու իրենց ու-  
նեցած շունեցածը՝ իրենց ջուխտ ձեռ-  
քերը :

Կովկասահայ արհեստաւոր դասի  
այս կացութիւնը ինձ շատ յիշե-  
ցնում է անգլիական արհեստաւոր-  
ներից 18րդ դարի երկրորդ կիսին ,  
երբ վարպետանոցային արհեստը եւ  
մասնափակուորան քայլ առ քայլ ետ  
էին մղում մանր արհեստաւորին եւ  
անկարելի էին դարձնում սրա ան-  
կախ գոյութիւնը :

Պակաս յատկանշանական չէ եւ  
հայ հողագործ դասի գրութիւնը :  
Իրազական համայնքը դադարել է գո-  
յութիւն ունենալ իր սօցիալ-տնտե-  
սական կարեւոր ազդակ եւ դարձել է  
ուրեւոր ու աղքեցիկ գիւղացիների  
չահերին ծառայող եւ կառավարու-  
թեան հարկային ու վարչական պա-  
հանջները ի կատար ածող մի հիմնար-  
կութիւն , Շնորհիւ գիւղատնտեսա-

կան արդիւնարեութեան եւ հողա-  
տիրութեան վրա ծանրացող անագին  
հարկերի , շնորհիւ՝ համայնքի անկ-  
ման եւ բանակցութեան արագ աճ-  
ման զուգակցող հարկերի անհաւա-  
սար բաժանման ու ստակալի սակա-  
ւածողութեան , շնորհիւ հայ գիւղա-  
կան դասի ախիւթական ետամնացու-  
ցութեան եւ պահպանողականութեան  
այդ դասի մէջ առաջ է եկել մի ըստ-  
ւար տարր , որին հայրական կտոր  
հողը կերակրել այլ եւս անկարող է  
եւ որը ստիպուած է գիւղից դուրս  
վաճառաչան եւ արդիւնարեական  
կենտրոններում ապրուստ որոնելու :  
Ահա այդ տարրը եւ երկրորդ տիպի  
պատկանող արհեստաւորները կազ-  
մում են մարդկային այն հումնիւթը ,  
որից պիտի օգտուի եւ արդէն իսկ  
սկսել է օգտուել հայ բուրժուազին :

Բոլոր հայ դասակարգից միայն  
այս վերջինը , բուրժուազին իր մեղ-  
րամիտ մէջն է գտնուում , երկուայ  
մանրավաճառները եւ գործակատար-  
ները այսօր բոլոր գրամատէրեր  
դարձած , հոյրախնամ կառավարու-  
թեան բարձր հովանաւորութեան  
տակ լալում են անյաւօրէն իրենց  
անօրինութեան տակ զրւած իւզոտ

պատուը՝ երկրի գանձերը եւ անօթի  
մարդկանց ձեռներն ուժը : Հայ բուր-  
ժուազինի ախորժակը անագին է , իսկ  
էտիքական հասկացողութիւնը ման-  
րագիտական , որովհետեւ նա զուրկ  
է կրթութիւնից , պատմական աւան-  
դութիւնից եւ ժողովուրդի ցածր  
խաւերից վեր ելած չընտել անկուշ  
տութիւնն ունի : Հայ բուրժուազին  
ոռու կառավարութեան այդ երես  
սուած սիրելին , անխնայօրէն շահա-  
գործում է իր զուտ բախող բանուոր  
ձեռները , որովհետեւ իր ստերի տակ  
ամուր հող է զգում , կառավարու-  
թեան ուրիշների եւ մտրակների ,  
անկազմակերպ բանուոր դասի տգի-  
տութեան հողը :

Մի խօսքով կովկասահայ ժողովրդի  
սօցիալ-տնտեսական իրականութիւնը  
ի յայտ է բերում նոյն երեւոյթները  
որը մենք տեսնում ենք արեւմտեան  
ժողովուրդների բնաշրջման սքեմայի  
մէջ . ներքին զանազաւորում եւ աղ-  
քատացում միջին դասերի եւ առա-  
ջացում հասարակական երկու նոր  
խումբերի՝ գործարանական բանու-  
րութեան եւ գրամատիրութեան :

Վ . ԱՍԼԱՆՆԱՆ  
(Շարունակելի)

իշխանի այլ և երիտասարդ սկս- նակի համար :

Եւ այդ հարցը Գալֆանի վերաբերմամբ իմ կարծիքով վճռվեց անպայման դրական մտքով : Պ. Գալֆանյան պէտք է լինի բեմի վրա, որովհետեւ նրա մէջ անկասկած կայ աստուածա- ծին կայծ, իսկ երբ խօսքը դե- քիտանտի, սկսնակի մասին է, այդ է գլխաւորը, այդ է էականը : Այդ տեսակէտից ես ի բոլոր սրտէ ողջունում եմ Պ. Գալֆա- նյանին, որ առաջին անգամ խա- զայով «Համլէտը» նոյն իսկ ա- ռաջին անգամ լուրջ կերպով բեմ գուրս գալով կարողացաւ մի քանի տեսարաններ խաղալ կա- տարելայէս գեղարուեստօրէն, ցոյց տալով և լուրջ դերեր խոր ըմբռնելու ընդունակութիւն և ըմբռնածը շնորհալի կերպով ներկայացնելու ձիրք» . . . :

ԱԶԳԱՅԻՆ ՔՐՈՆԻԿ

Սիւրբի Հիսարի մէջ մեռած Ստեփան Թօսունեան 300 ոսկի կտակեր է վարժարան մը շինե- լու համար, 50 ոսկի Փրկչի Հի- ւանդանոցին, 50 ոսկի տեղւոյն աղքատսխանմի, 3 ոսկի սանուց ընկերութեան, 50 ոսկի ալ կալուած մը գնելու, որմէ գոյա- ցած հասոյթը վարժարաններու ծախքին պիտի յատկացուի :

— Խառն ժողովը Կրօնականի առաջարկութեամբ պիտի զբաղի Պուկարիոյ մէջ առաջնորդու- թիւն մը հաստատելու խնդրով :

Ինչպէս կերելու որոշած են մեզի ազատել զանազանակերպ այցելու հովիւներէ :

— Իզմիրեանց կտակի գրական յանձնաժողովը ներկայացուած աշխատանքներու թեանց համար քննիչներ որոշեր է :

Զբաղեր է նաեւ մրցանակի մասին պատրաստուած ու բարե- փոխուած կանոնագրի մը ընթեր- ցումով և որոշեր է վայն ներ- կայացնել Խառն ժողովին հաս- տատուութեան համար :

— Ռուսաստանէն 700 բուպի նոր նպաստ մը զրկուած է պատ- րիարքարան յանուն Զանչեան- ցի որբանոցներուն :

— Գամառ-Քաթիպայի մահար- ձանին համար մինչեւ օրս հա- ւաքուեր է 2637 բուպի : Մտա- գրութիւն կայ հանգուցեալ բա- նաստեղծի կիսարձանը մինչեւ այս օգոստոս պատրաստել ու մահուան տարեգարձին կանգնել :

Բեթերպուրկի հայ ուսանող ներք որոշած են հանգուցեալ Զանչեանցի յիշատակին գեղար- ուեստական — գրական ժողովա- ծու մը հրատարակել :

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Թ Ո Ւ Բ Ք Ի Ա

Պուլիս վերադառնալու խոստու- մով Բաբիզի թուրք գեսպանին 350 Ֆրանք ստացող Ֆուատ ա- նուն անձը ազատ արձակուած է հարցաքննիչ դատաւոր տը Վալի կողմանէ :

— Պուլսէն կը հեռագրեն թէ Ֆրանք-Թուրք վաճառականական համաձայնութիւն մը կնքուեր է որ յետ մանրամասն քննութեան վերջնականապէս պիտի ընդուն- ուի :

— Պրինտիզի թրքական դեր- հիւպատոսը յայտարարած է իր կառավարութեան թէ կը դադրի պաշտօնավարելէ, քանի որ ամ- սականները չեն վճարուիր և յե- տին ծայր նեղութեան մատնուած է :

— Եգիպտոսի Խոիվին մայրը Պուլիս գացած է. անոր հետ միա- սին վերադարձեր են եօթը ե- րիտասարդ թիւրքեր, որոնք Խոիվի միջամտութեամբ Սուլ- թանի ներման արժանացեր են :

— Եւրոպական քանի մը դես- պանները Բ. Գրան ուշադրու- թիւնը հրաւիրեր են Մօսուլի վիճակին վրայ, ուր քիւրտ պէյ մը 15ի շափ քրիստոնեաներ սպաննած և անոնց ոչխարները սարած է, ու 1000 քրիստով լեւները քաշուելով մտադրու- թիւն ունի քրիստոնեաները կօ- տորել : Բ. Գուռը Մօսուլի նա- հանգապետին հեռագրած է քրիս- տոնեաները պաշտպանել :

— Սուլթանը հրամայած է խիստ հակողութիւններ կատարել Անդ- րիանապոլոյ նահանգին մէջ ուր Մակեդոնական շարժումի մը կաս- կածը կայ :

Ռ Ո Ւ Ս Ի Ա

Գերմանական թերթ մը ստոյգ աղբիւրէ կիմանայ թէ կոմս Թո- լսթոյ պիտի արտաքսուի Ռու- սիայէն և արդէն այս առթիւ ձարհն կողմանէ ստորագրուած հրամանագիրը հաղորդուած է ի- բեն :

— Կրթական նոր նախագարը, շրջաբերականով մը իր բոլոր ստորագասեալները կը հրաւիրէ սրտանց աշխատիլ ուսումնարա- նական գործը բարեկարգելու հա- մար :

Ռուսական թերթերը մեծ հա- մակրանքով կը վերաբերին գէպի նոր նախարարը և կը յուսան թէ ան պիտի կրնայ բարձրագոյն դպրոցները գնել այիպիսի հի- մերու մը վրայ, որ ուսանողները իրենց նպատակէն չի շեղին, և այդ բոլորը պիտի ըլլայ ոչ թէ ճնշումով, այլ ուսումնարանական պաշտօնէից և ուսանողներու մի- ջեւ սերտ յարաբերութիւններ ստեղծելով, և ուսանողներու ու-

րոշ ազատութիւնը յարգելով :

— Եւրոպական թերթերը կը հաղորդեն որ Թօլսթոյ աքսոր- ուած է Ռուսիայէն :

— Անցեալ երկուշաբթի Ռու- սիոյ բարձրագոյն վարժարան- ները բացուեր են :

Պ Ո Ւ Լ Կ Ա Ր Ի Ա

Փէրտինանտ իշխանը չէ կըր- ցած հակառակ ստիպողականու- թեան Պուկարիա դառնալ վասն զի քիչ մը տկար է և պէտք ունի հարաւային կլիմային դարմանե- լու համար իր հիւանդութիւնը որուն համար կըրեն թէ «կուլթ» է :

Թ Ր Ա Ն Ս Վ Ա Լ

Բէքինէն կը հեռագրեն որ Ռո- տէզիայի բնիկները կը յարձա- կին անգլիացիներու վրայ :

— Սէնթ Էլէնի պօէր գերի- ները Հոլանտական կառավարու- թեան աղբրագիր մը տուեր են և կը խնդրեն որ իրենց թոյլ արուի հոլանտական կուլիէս գաղթեն :

— Լօրտ Գիշնէր ապրիլ 12ին կը հեռագրէ որ իր վերջին հե- ռագրէն յետոյ անգլիացիները 113 պօէր գերի բռնած են, գրաւած են 98 ձի, 138 հրացան մէկ քրուրի թնդանօթ ու շատ մը վակոններ և կենդանիներ :

— Ժէնէրալ Ֆրէնչ բուրբովին հիւանդ է, բժիշկները խորհուրդ տուած են ծովային ճամբորդու- թիւն մը ընել :

— Լուր մըն ալ կը պրտտի որ Ֆրէնչ իսկապէս գերի բռն- ուած է պօէրներէն. պօէր- ները զայն ազատ արձակած են, այլեւս չի պատերազմելու պայմանով. այդ պատճառով ալ Ֆրէնչ Անգլիա կը վերադառնայ Վերջին օրերս Թրանսվալի մէջ կարեւոր գործողութիւն մը տեղի ունեցած չէ :

Ա Ն Դ Լ Ի Ա

Լօնտօնի մասնաւոր շրջանակ- ներու մէջ լուր կը պտտի թէ Սալզպրի պաշտօնէն պիտի հրա- ժարի և անոր պիտի յաջորդէ պետական խորհրդին նախագահ Տըվլէյարի գուքը :

Չ Ի Ն Ս Ա Տ Ա Ն

Բէքինի օտար գեսպանները, իրենց մէջը համաձայնելէ ետ- քը, Լիհունկ Զանկի յայտարա- րեր են թէ՛ տէրութեանց կող- մէ Զինէն պահանջուելիք հա- տուցմանց գումարն է մէկ միլ- հառ վեց հարիւր միլիօն ֆրանք :

Գեսպանները կը յայտարարեն նաեւ որ յունիս 30էն սկսեալ այդ գումարին վրայ ամէն ամիս մէկուկէս միլիօն ֆրանք պիտի աւելնայ, մինչեւ որ հաշտու- թիւնը կնքուի :

— Զօրավար Վալտերզէ կը հեռագրէ որ ժէնէրալ Շվարց- հոֆի մարմինը ժամանակաւորա- պէս թաղուած է :

Պալատին կից վեց մեծ շինու- թիւններ են այրուեր, բայց ինք գեռ կրնայ պալատին մէջ ապրիլ : Հրդեհը թշնամիներու գործը չէ :

Ռ Ո Ւ Մ Ա Ն Ի Ա

Վիէննայի թերթի մը Պուր- րէշէն կը հեռագրեն թէ՛ պալա- տի մէջ պահուրտած Բէթթօֆ ա- նունով անիշխանական մը ձեռ- բակաւեր են, որ մտադիր է ե- շեր թագաւորը սպաննել :

Ի Տ Ա Լ Ի Ա

Հոովմէն Թրանսական «Ռարէլ» թերթին կը գրեն թէ Ռ. մպէրթօ թագաւորին սպաննիչը՝ Պրէտի խենդեցած է. Իտալական կառա- վարութիւնը ամէն ջանք ըրեր է որ այս լուրը երեւան չելլայ ու միւս կողմանէ խիստ քննութիւն մը կը կատարէ երեւան հանելու համար յանցաւորները, վասն զի կը կարծուի թէ Պրէսիի վրայ հակելու պաշտօն ունեցող բան- տապաններուն գէշ վարմունքէն առաջ եկած է այս յանկարծա- կան խենդութիւնը :

— Հոովմի և այլ քաղաքներու մէջ երկրաշարժի ցնցումներ ե- ղեր են :

Կ Ը Փ Ն Տ Ռ Ո Ւ Ի

Յովհաննէս Տէր Խաչերեան, Սեբաստիոյ Կովտին գիւղէն, 40 տարեկան միջահասակ, ամուս- նացած, 96ի դէպքերէն ի վեր անյայտ :

Տեղեկութիւն ուեցողները թող հաճին հաղորդել Ֆիլիպէ՝ Պ. Վարդանեանի սրճարանը :

Թ Ա Տ Ր ՈՆ Ս Ա Ն Դ Ր Ա Լ

Յառաջիկայ շաբաթ ե- րեկոյ 21 ապրիլ հայ դերասա- նական խմբին կողմանէ ըստ խնդրանաց բաղամթիւ ազգայ- նոց պիտի ներկայացուի՝

Վասպուրականի Հերոսներ անուն թատերախաղը, տանկե- րէն լեզուաւ, որուն համար մեծ խնամք և հոգ տարուած է, գի- ները դիւրամատչելի, տոմսերը ալսօրուրէն կը ծախուի մուսու- լա Վասպուրականի սրճարանը :

ОТГОВОРНИКЪ:

Д-ръ М.Х.Ж.РДИЧЪ ВАРТАНЪ

Печ. «Взаимность» — Варна.